

ցութիւն» անունով, աղգային հողի վրայ. 3. Քիւրդ կուսակցութիւն՝ Քիւրդ ցեղական հողի վրայ:

Վերջիններս հետեողաբար կը յարէին Թիւրք հին ու նոր՝ և Հայ քաղաքական կուսակցութեանց՝ ցեղ ցեղ:

Անհատական Յեղափոխութեանց ձեռնարկներու օրինակներէն է մինչ ցարդ մեր առաջ բերածները:

Երբ Հայերու մէջ կը հիմնուի և կուժովայ հաւաքական կազմակերպութեամբ Յեղափոխական գործունէութիւնը, Հ. Յ. Դաշնակցութիւնը կ'սկսի կռուել նախ քիւրդերու աւազակային գործողութիւններու դէմ՝ և միեւնոյն ժամանակ կը կամենայ զանոնք կազմակերպել իր քաղաքացի:

Անդրանիկը Սասունի կոխներու մէջ Թիւրք հին ըէժիմեան իշխանութեան հանդէպ՝ 1904 ի կռուին՝ իր պատերազմական շրջանի մի քիւրդ զիւղի կ'առաջարկէր իրեն հետ միանալ ու կռուել Թիւրք ժամանակակից ըէժիմի անկարգութիւններու դէմ:

Այնուհետեւ Դաշնակցութիւնը իրական քայլեր առաւ, Քիւրդերուն իրր ժողովուրդ կանգնեցնել քաղաքացիական պարտականութեան ազատ և ուղիղ գծի վրայ. բանակցութիւններ կատարեց, գործակիցներ ունեցու, և մինչև անգամ Հայ զոհեր տուաւ այդ առթիւ, ինչպէս Զընտօն և Ընկերները:

Հայ-Դաշնակցութիւնը առաջանալով իր գործունէութեան մէջ՝ հաւասարապէս սկսեց և կազմակերպել Քիւրդ զիւղական աշխատաւորութիւնը, և քաղաքներու մէջ՝ Քիւրդ բանւորութիւնը, ուրիշ ազգութեան անդամ բանւորներու հետ:

Այս ապացոյցները բաւական են հաստատել, որ չը նայած ժամանակակից քաղաքական և տնտեսական դադափարներու հորովման ու փոփոխութեանց՝ Հայ անհատական ու հաւաքական յեղափոխութիւնը աշխատեր է Քիւրդերը դուրս բերել իրենց նախնական վայրենի վիճակէն, և անոնց առջև հարթել առաջդիմութեան և մարդկութեան ասպարէզը. եթէ նա բոլորովին չէ յաջողեր, դա ինչիւր չէ, կարեւորը՝ ձեռնարկն ու անոր յայտարարութիւնն է: